

Վայացավ քաղաքացիների օգոստոս ամսվա ընդունելությունը

20.08.2018



2018 թվականի օգոստոսի 10-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում տեղի ունեցավ քաղաքացիների հերթական ընդունելությունը: Ընդունելության էին եկել 138 քաղաքացիներ: Ընդունելության եկած քաղաքացիներից 135-ը դիմել էին դրամական աջակցության խնդրանքով, որոնց խնդրանքը բավարարվել է:

Մեկ քաղաքացի դիմել էին այլ հարցերով, մեկը աշխատանքի տեղավորման խնդրանքով, մեկը՝ վթարային բնակարանի խնդրով: Նշված քաղաքացիների խնդրանքը բավարարելու նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթեյանը հանձնարարություն է տվել համապատասխան ստորաբաժանումների ղեկավարին: Հարցերը գտնվում են լուծման փուլում: